ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» հունիսի 2014թ. N_____Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝

Երևան համայնքի սեփականություն համարվող Փ.Բուզանդի փողոցի 1/3 հասցեում գտնվող շենքի 5-րդ հարկի 53.5քմ և 89.3քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով 3 (երեք) տարի ժամկետով տրամադրել «Հայրենական ապրանքարտադրողների միավորում» հասարակական կազմակերպությանը:

2.Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ «Հայրենական ապրանքարտադրողների միավորում» հասարակական կազմակերպության հետ սահմանված կարգով կնքել տարածքի անհատույց օգտագործման պայմանագիր:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայրենական ապրանքարտադրողների միավորում» հասարակական կազմակերպության նախագահ Վազգեն Սաֆարյանը դիմել է Երևանի քաղաքապետին՝ Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքում վարձակալության իրավունքով կազմակերպության կողմից զբաղեցված 53.5քմ և 89.3քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու խնդրանքով:

Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքը, համաձայն անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայականի, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

«Հայրենական ապրանքարտադրողների միավորում» հասարակական կազմակերպության նախագահը գրությամբ հայտնել է, որ Հայրենական ապրանքարտադրողների միությունը հիմնադրվել է 1999 թվականին, որի շարքերում ընդգրկվել են 300-ից ավելի տնտեսավարող սուբյեկտների ղեկավարներ, անհատ ձեռներեցներ, գիտնականներ, մտավորականության ներկայացուցիչներ, ընդ որում՝ հայրենական ապրանքարտադրողների միության անդամների ճնշող մեծամասնությունը Երևանի արդյունաբերության ձեռնարկությունների տնօրեններ են: Միությունը պաշտպանում է հայրենական ապրանքարտադրողների շահերը, ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկայում, ակտիվորեն արձագանքում է հանրապետության տնտեսական կյանքին առնչվող խնդիրներին: Բացի այդ, Միությունը ցանկություն է հայտնել նաև ընդգրկվել Երևանի քաղաքապետին կից փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման և աջակցման խորհուրդի կազմում և ներկայացրել է համապատասխան թեկնածություններ:

Հաշվի առնելով որ կազմակերպությունը չի հետապնդում շահ ստանալու նպատակ, ինչպես նաև կազմակերպության կողմից իրականացվող գործունեության կարևորությունը, վերջինիս աշխատանքային գործունեության կազմակերպմանն աջակցելու նպատակով, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում որոշման նախագիծ՝ Փ.Բուզանդի փողոցի հ.1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 5-րդ հարկի 53.5քմ և 89.3քմ մակերեսով տարածքներն անհատույց օգտագործման «Հայրենական ապրանքարտադրողների միավորում» հասարակական կազմակերպությանը տրամադրելու վերաբերյալ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ.ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ